ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի և ՀՀ ԱՆ վերահսկողության ծառայության պետ Միքայել Մինասյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Արթուր Հովհաննիսյան և Միքայել Մինասյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ և ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2018թ. դեկտեմբերի 4-7-ը:

Հրավիրող կողմը՝ Ավստրիայի Հանրապետության սահմանադրական խնդիրների, բարեփոխումների, սահմանափակումների վերացման և արդարադատության դաշնային նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Էլեկտրոնային դատարանները Եվրոպայում» խորագրով միջազգային համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Համաժողովի ընթացքում քննարկվել են էլեկտրոնային արդարադատությանը, մասնավորապես էլեկտրոնային դատարաններին և էլեկտրոնային հայցադիմումներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ավստրիայի Հանրապետության սահմանադրական խնդիրների, բարեփոխումների, սահմանափակումների վերացման և արդարադատության դաշնային նախարարության հրավերով ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը և ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետ Միքայել Մինասյանը 2018թ. դեկտեմբերի 4-ից 7-ը Ավստրիայի Հանրապետությունում (Վիեննա)

մասնակցել են «Էլեկտրոնային դատարանները Եվրոպայում» խորագրով միջազգային համաժողովին:

Համաժողովի ընթացքում քննարկվել են էլեկտրոնային արդարադատությանը, մասնավորապես էլեկտրոնային դատարաններին և էլեկտրոնային հայցադիմումներին առնչվող հարցեր: Համաժողովը մասնակից պետությունների ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռել ներկայացնել իրենց երկրներում վերը նշված ոլորտներում արձանագրած առաջընթացը, ինչպես նաև էլեկտրոնային գործիքների կատարելագործմանն ուղղված հետագա քայլերը:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով էլեկտրոնային արդարադատության ոլորտում ՀՀ կողմից իրականացված բարեփոխումները և նախատեսվող միջոցառումները: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալն ի թիվս այլ հարցերի, անդրադարձել է նաև մշակման փուլում գտնվող 2019-2024թթ. Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությանը և դրանից բխող գործողությունների ծրագրին, որի կարևորագույն ուղղություններից է նաև «Էլեկտրոնային արդարադատություն» տիրույթի ընդլայնումը և արդյունավետության ապահովումը: Այս ուղղության ռազմավարական նպատակները միտված են էլեկտրոնային արդարադատության համապարփակ և արդյունավետ համակարգի զարգացմանը, դատարաններում և արդարադատության ոլորտի այլ հաստատություններում էլեկտրոնային կառավարման գործիքների զարգացմանը:

Արթուր Հովհաննիսյանը միջազգային համաժողովի մասնակիցներին տեղեկացրել է, որ Դատաիրավական բարեփոխումների ծրագրի նախագծով նախատեսվում է դատարաններում միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի (e-court) ներդնում և գործարկում՝ դրանում ներառելով էլեկտրոնային կառավարման այլ համակարգեր՝ ապահովելով դրանց միասնականացումը, ապահովել էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու հնարավորությունը,

ինչպես նաև դատարաններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդնում և այլն:

Պետք է նաև նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետ Միքայել Մինասյանի՝ համաժողովին մասնակցելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանում հանրային ծառայությունների մատուցման ոլորտում տեղի ունեցած վերջին լայնամասշտաբ բարեփոխումների իրականացումը համակարգվել է ՀՀ ԱՆ վերահսկողության ծառայության կողմից: Միաժամանակ, էլեկտրոնային արդարադատության ոլորտում նախատեսվող բարեփոխումները նույնպես համակարգվելու և իրականացվելու են ՀՀ ԱՆ վերահսկողական ծառայության կողմից: Այս համատեքստում, ՀՀ ԱՆ վերահսկողության ծառայության պետի մասնակցությունը վերը նշված համաժողովին հնարավորություն ընձեռնեց ծանոթանալ էլեկտրոնային արդարադատության ոլորտում եվրոպական չափանիշներին, որը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում վերը նշված ոլորտում եվրոպական լավագույն փորձի ներդրմանը և բարեփոխումների արդյունավետ իրականացմանը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
11.12.2018թ.